ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն»; «...եւ զվկայիցն անուն ժառանգեալ՝ կատարեցան ի Քրիստոս»)[8]:

Սակայն թէկուզ այդ ծանր կորուստներով՝ թշնամուն շատ աւելի մեծ վնասներ պատճառած Հայոց բանակն Աւարայրում պահպանուեց եւ, գիշերը կազմակերպուած նահանջելով, երկրի ամրոցներում ու ծայրագաւառներում դեռ նոր ահեղ մարտեր մղեց. այնքա՛ն ամիսներ, մինչեւ, ի վերջոյ, եկաւ Սասանեանների իրական զիջումների օրը: Եւ դրանից յետոյ Եղիշէն արդէն կարող էր տալ Աւարայրի ճշգրիտ գնահատականն իր դիպուկ արտայայտութեամբ. «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, եւ կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»: Իսկ մեզ մնում է քաջ նահատակների համար լոկ սերնդէ սերունդ կրկնել. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի՛»[9]:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ալիշան Հ. Ղ. 1890, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ – Ս. Ղազար:

Ալիշան Հ. Ղ. 1901, Հայապատում, հտ. Բ, Վենետիկ – Ս. Ղազար:

Ակինեան Հ. Ն. 1969, Թադէի եւ Սանդխտոյ վկայաբանութիւնը, ՀԱ, Վիեննա, 399-426:

Անանուն 2004, Վկայաբանութիւն Թադէոսի Առաքելոյն ... Գիւտ նշխարաց Թադէոսի Առաքելոյն, Առաջաբանը եւ բնագիրը՝ Յ. Քէոսէեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 1-22:

---

[8] Ուշագրաւ է, որ որոշ շեղումներով հանդերձ՝ ճակատամարտը գրեթէ նոյնանման փուլերով է դիտարկում նաեւ Արմէն Այվազեանը (հմմ. Айвазян 2016, 281-309).

[9] Այս յօդուածին յաւելուած՝ Ռ. Թարումեան-Յակոբեանի սիրալիր օժանդակութեամբ մեր ձեւաւորած «Աւարայրի դաշտի տարբերակները» եւ «Աւարայրի ճակատամարտը» քարտէզներում փորձել ենք դիտարժան ձեւով ցոյց տալ պատմական ճակատամարտի վայրի տեղորոշման բոլոր վարկածներն ու նրա ընթացքում կողմերի իրական զօրաշարժերը: Յաւարտս նաեւ նշենք, որ 2016 թ. Յուլիսի 15-ին՝ Արտազի Ս. Թադէի վանքի ուխտի օրերի առիթով «Անի տուր» գործակալութեան հաւաքած 10-հոգանոց խմբով Աւարայր-Աբարաբաշիի դաշտ իջանք այդ ուխտի կազմակերպիչ երկու նուիրեալների՝ ՀԱԵ Ատրպատականի թեմի աշխատակիցներ Կարէն եւ Քրիստ Մկրտչեան եղբայրների ու մի քուրդ տեղացու ուղեկցութեամբ (նորից շնորհակալութի՛ւն բոլորին): Հայր Աթանաս վրդ. Մովսէսեանը հոգեհանգստի կարգ կատարեց Աւարայրի նահատակ-հերոսների յիշատակին, իսկ մենք Երեւանից տարած ծաղկեպսակն իջեցրինք Տղմուտ՝ Էմամղոլի-Բալայի գետանցի մօտ: